«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2021

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ
ԱՌԱՐԿԱ	ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՀԵՂԻՆԱԿ	ԱՐՄԵՆՈՒՀԻ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՄԱՐԶ	ԱՐՄԱՎԻՐ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ՓԱՐԱՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ԳԼՈՒԽ 1.ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1. Տիեզերական ժողովների ընդհանուր բնութագիրը և հրավիրման պատճառները 5

1.2. Տիեզերական ժողովների պատմականնշանակությունը 9

ԳԼՈՒԽ 2.ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

2.1. Նիկիայի Տիեզերական ժողովի հրավիրման պատճառների և Արիոսի առաջադրած ուսմունքի մասին 10

2.2. Կոստանդնուպոլսի տիեզերական ժողովը և Մակեդոնի ուսմունքը 14

2.3.. Եփեսոսի ժողովն ու Նեստորի հայացքները 16

ԳԼՈՒԽ 3.ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԸՆԴԴԵՄ ՄՆԱՑՅԱԼ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ

3.1. Հայոց եկեղեցին <<մոնիֆիզիտ>,Տիեզերական ժողովներին չմասնակցելու և նրանց որոշումները չընդունելու պատճառներն ու եկեղեցու հայացքները 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքում մենք՝ Փարաքարի միջնակարգ դպրոցի սաներս ուսումնասիրել ենք քրիստոնյաների կողմից հրավիրված Տիեզերական ժողովները:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում,որ ներկա պահին նույպես հանդիպում են կրոնին սպառնացող վտանգներ (այդպիսիք են աղանդավորները կամ քրիստոնեական դավանանքը մերժողները) և մենք հիմա նույնպես պետք է փնտրենք այդպիսի խնդիրների առաջն առնելու միջոցներ,ինչպիսիք էին քրիստոնյաների Տիեզերական ժողովները:

Մեր կատարած աշխատանքի նպատակն է ներկայացված թեմայի շուրջ սեփական դիտարկումներ և հիմնավորումներ կատարելու գործընթացն է:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել Տիեզերական ժողովների պատմությունը և դրանց շուրջ առաջարկել նոր եզրակացություններ

2. Գտնել Հայ եկեղեցու Տիեզերական ժողովների որոշումները չընդունելու պատճառները և դրանպատակը:

3. Գտնել,թե որոնք են եղել Տիեզերական ժողովների հրավիրման ուրիշ դրդապատճառները և իմանալ դրանց հիմնական էությունը:

Մեր ուսումնասիրության օբյեկտն են հանդիսանում Տիեզերական ժողովները և նրանց առընչվող հիմնախնդիրները:

Ուսումնասիրության առարկան են հանդիսանում Տիեզերական ժողովների վերաբերյալ չլուսաբանված փաստերն ու դրանց մասին տարբեր մարդկանց տեսակետներ

Հետազոտական աշխատանքի նորույթը:Հետազոտական աշխատանքի նորույթը հանդիսանում է այս թեմայի վերաբերյալ տեսական գրականության ուսումնասիրումը և վերլուծումը:

Թեմայի կառուցվածքը:Թեման կազմված է ներածությունից,երեք գլխից,ամփոփագրից և գտագործված գրականության ցանկից:Աշխատանքը ամփոփված է համակարգչային էջում:

ԳԼՈՒԽ 1.ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ,ՀՐԱՎԻՐՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ,

Քրիստոնեությունը դարեր ի վեր եղել է շատ մարդկանց և քրիստոնյաների՝ Աստծու նկատմամբ հավատարմության և սիրո հատկորոշիչ:Քրիստոնեությունը կրոն է,որը ուսուցանում է սիրել մարդկանց,ներել բոլորին և չգործել մեղքեր:Քրիստոնեությունը սովորեցնում է,որ կյանքում ամեն ինչ ներելի է է,սովորեցնում է ապրել պարկեշտ,առանց մեղքերի բեռը մեր վրա կրելու,ապրել հանգիստ և հավատարիմ Աստծուն:

Այս ամենից զատ անգամ անխնդիր ու անբիծ կրոնի մեջ էլ առաջանում են որոշակի խնդիրներ:Խնդիրը միշտ առկա է,քանի որ յուրաքանչյուր մարդ ունի իր տեսակետը հայտնելու հնարավորություն,իսկ մարդկանց տեսակետները իրոք տարբեր են:

Այդպիսին եղավ Տիեզերական ժողովների առաջացման պատմությունը:Որոշ քրիստոնյաներ առաջ բարձրացրին ընդունված կրոնական փաստերին հերքող փաստեր,որոնք իրենց մտածելու տեղիք էին տալիս:Քրիստոնեական համայն եկեղեցին որոշեց քննել նրանց առաջադրած խնդիրներն ու ուսումնասիրել դրանք,տալ հստակ և անքննելի պատասխաններ:Այս հարցերն ուսումնասիրելու համար եկեղեցին չսահմանափակվեց միայն Հռոմի,Կ.Պոլսի կամ այլ հայտնի եկեղեցիների եկեղեցականների և քահանաների որոշմամբ.այն հրավիրեց ամբողջ աշխարհում սփռված քրիստոնեական եկեղեցիների պատվավոր ներկայացուցիչներին՝ հարցին բազմակողմանի դիրքորոշում տալու համար:Այսպես սկսեցին հրավիրվել առաջին Քրիստոնեական Տիեզերական ժողովները:

Մեր թվարկության 4-րդ դարում առաջին անգամ սկսեցին հրավիրվել Քրիստոնեական Տիեզերական ժողովները:Իսկ ի՞նչ էին նրանք իրենցից ներկայացնում:Ո՞րն էր նրանց հրավիրման պատճառը:Ինչու՞ նրանք կոչվեցին Տիեզերական:Ի՞նչն էր ստիպել եկեղեցականներին հրավիրել բոլոր քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչներին:Ծագում են բազում և բազմաթիվ հարցեր,որոնց պատասխանները մեր տեսանկյունից կներկայացնենք մենք՝ Փարաքարի միջնակարգ դպրոցի աշակերտներս այս հոդվածում:

Սկսենք ամենասկզբից:Ինչու՞ հրավիրվեցին առաջին Տիեզերական ժողովները: Պատճառը հետևյալն էր:Ըստ տվյալների՝ քրիստոնյաներին հարկավոր էր

քննարկել դավանաբանական և եկեղացական հարցերը,որոշել նոր

կանոնակարգ,քննարկել աշխարհիկ հարցերն ու լուծում տալ կյանքի այլ բնագավառներին վերաբերող խնդիրներին:Սկզբնական շրջանում քրիստոնեական ժողովները հրավիրվել են միայն տեղական սկզբունքով և միայն մի երկրի եկեղեցական պաշտոնյաների առկայությամբ:Այդպիսի ժողովներ

հրավիրվում էին դեռևս Մեր թվարկության երկրորդ դարում:Քրիստոնեական ժողովները այդ դարաշրջանում հրավիրվում էին հիմնականում գաղտնի ճանապարհով:Պատճառը ակնհայտ է՝ քրիստոնյաներին հալածում էին:Այդտեղից էլ հետևություն,թե ինչու առաջին Տիեզերական ժողովները սկսեցին հրավիրվել հենց 4-րդ դարում:Պատճառը այն էր,որ Հռոմեական կայսրությունը 313

թվականին,Միլանի հրովարտակով,Կոնստանդիանոս Ա Մեծ կայսրը քրիստոնեությունը ճանաչում է Հռոմում որպես պետական կրոն:Արդեն 325 թվականին առանց որևէ վտանգի Նիկեայում հրավիրվում է առաջին Տիեզերական ժողովը:

Տիեզերական ժողովների հրավիրման պատճառը հատկապես կրոնը անարգելու վտանգն էր,որը իրագործում էին այն մարդիկ,ովքեր Ավետարանին դեմ դուրս գալով, տարածում էին տարբեր ուսմունքներ,մարդկանց սովորեցնելով,որ իրենց ուսմունքը ճիշտ է և անքննելի:Մարդիկ աստիճանաբար սկսում էին հետևել նրանց,լսել նրանց <<ճշմարիտ>> խորհուրդներն ու հետևել նրանց խոսքին:Եկեղեցին տեսնելով քրիստոնեությանը սպառնացող այդ ահռելի

վտանգը,որոշեց հրավիրել բոլոր քրիստոնեական եկեղեցիներին,այդ հարցերը տարբեր անկյուններից դիտելու և քննարկելու համար:

Աշխարհի տարբեր անկյուններից ժողովների հրավիրման վայրեր էին մեկնում գրեթե բոլոր քրիստոնեական եկեղեցիները,մասնակցում ժողովներին,լսում այլ եկեղեցիների կարծիքն ու կայացնում իրենց որոշումը՝ համամի՞տ են արդյոք նրանք ժողովի որոշումների հետ,թե նրանց համար ընդունելի չեն այդ որոշումները:

Հաճախ որոշումներն ընդունելու կամ չընդունելու պատճառով եկեղեցիների միջև,ինչպես նշեցինք տարաձայնություններ էին առաջանում:Լինում էին դեպքեր,երբ եկեղեցիները տեսակավորվում էին խմբերի (այդպիսին էր Քաղկեդոնի տիեզերական ժողովը):Տիեզերական ժողովների որոշումները

պարտադիր էին նրա հեղինակությունն ընդունած բոլոր եկեղեցիների համար:

Անցնենք երկրորդ հարցին:Ինչու՞ էին եկեղեցիները կոչվում Տիեզերական և ի՞նչ հատկանշական առանձնահատկություններ պետք է ունենային ժողովները
<<Տիեզերական>> կոչվելու համար:

<<Տիեզերական>> (ռուս. Вселенский,անգլ. Universal) անվանումը հավանաբար կապ ունի տիեզերք բառի նշանակության հետ՝ ընդ որում <<տի-եզերք>> (առանց եզերքի,անեզերք,անսահմանություն):Տեղական էին կոչվում մասնավոր հարցերի համար հրավիրված ժողովները,որոնք քննարկվում էին միայն տվյալ երկրի եկեղեցականների կողմից և համաեկեղացական գումարում չէին պահանջում:Այդպիսի ժողովներն,ինչպես նշեցինք հրավիրվել են դեռևս երկրորդ դարից սկսած:Իսկ այն ժողովները,որոնց հարցերը քննարկելու համար պարտադիր էր այլ եկեղեցիների առկայությունը կոչվում էին Տիեզերական:Տեղի է ունեցել Տիեզերական յոթ ժողով: Ժողովի՝ «Տիեզերական» կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ է հաստատում, ժամանակացույցի ստուգում և նրա կանոնակարգերի ընդունում բոլոր տեղական Եկեղեցիների կողմից:Այդ անվանումը ստանալու համար ժողովը պետք է օժտված լիներ այդ ժողովներին հատուկ օրենսդիր գործունեությամբ՝ ընդ այդմ ուններնար դավանաբանական շարադրանք (հետագայում դրան ավելացավ նաև Հավատո Հանգանակի կազմումը):

Ժողովները պետք է ունենային որոշակի արտաքին հատկանիշներ,որոնցից էին

ժողովի լայնական ընդգրվածությունը,այսինքն,թե բնական հաշվով քանի եկեղեցի էր ընդգրկում տվյալ ժողովը:Երրկորդը ժողովի պարտադիր համապատասխանումն էր Սուրբ Գրքին և քրիստոնեական հավատքին,ընդ որում նաև նախորդ բոլոր Տիեզերական ժողովներին:Դա նշանակում էր,որ Տիեզերական ժողովները իրավունք չունեին խախտել նախորդ Տիեզերական

ժողովների որոշումները,դեմ դուրս գալ դրանց կամ խախտել նրանց

հայեցակարգը:Նշվում է նաև,որ Տիեզերական ժողովների նախատիպով առաջին

անգամ այդպիսի ժողով հրավիրվել է 51 թվականին՝ Քրիստոսի առաքյալների կողմից Երուսաղեմում:

Տիեզերական ժողովների որոշումները հաավասարվել էին օրենքի ուժի աստիճանին:5-րդ դարի եկեղեցական պատմիչ Սոկրատ Սքոլաստիկոսը իր ձեռագրերում գրել է. «**Այն ժամանակվանից, երբ կայսրերը դարձան քրիստոնյա, եկեղեցուգործերը դարձաննրանցից կախված և նրանց կամքով էին գումարվում**

մեծ ժողովները»[1]***:***

Եղել են ժողովներ,որոնք ի սկզբանե չեն ստացել <<Տիեզերական>> անվանումը,այլ Տիեզերական են կոչվել,ժողովի տեղի ունենալուց ավելի ուշ:Այդպիսի ժողովներ են եղել Կոստանդնուպոլսի Երկորդ և Հինգերորդ ժողովները:Հաճախ տեղի է ունեցել նաև հակառակ երևույթը:Ժողովը հռչակվել է որպես <<Տիեզերական>>, սակայն ավելի ուշ հեռացվել այդ վավերացումից:Այդպիսին են եղել Հռոմի (341 թվական),Սարդիկայի (347) և Եփեսոսի Երկրորդ (449 թվական) ժողովները:Տիեզերական ժողովների հրավիրման համար պարտադիր պայման չեն եղել Հռոմի Պապի և կայսեր հաստատումը,օրինակ՝ Կոստանդնուպոլսի Երկրորդ Տիեզերական ժողովը:

Դավանաբանական տեսանկյունից Տիեզերական ժողովներին արգելվում էր շեղվել Աստվածաշնչյան կանոնակարգից կամ դավանաբանությունից:Ինչպես նշվում էր ժողովները պետք է հրավիրվեին Սուրբ Հոգու ներշնչանքից:

Առաքյաների 51 թվականի ժողովի ժամանակ ասվել էր. <<Հաճելի թվաց Սուրբ Հոգուն և մեզ...>>[2],ըստ այդմ եկեղեցու հայրերը հնազանդվում էին,հավատալով,որ Սուրբ Հոգին ապրում է մեզ բոլորիս մեջ և դավանաբանական որոշումները պետք է ընդունվեին Սուրբ Հոգու առաջնորդությամբ:

[1] Սոկրատ Սքոլաստիկոս-Պահպանված անվերնագիր ձեռագրեր
[2] Գործք 15:28

1.2. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տիեզերական ժողովները մեծ նշանակություն ունեին քրիստոնեության դավանաբանության առաջացման

գործում:Տիեզերական ժողովների միջոցով համայն քրիստոնեական

եկեղեցին պայքարեց աղանդի,աղանդավորների,հակաքրիստոնեական ուսմունքների և կրոնին վտանգ սպառնացող խնդիրների դեմ:

Տիեզերական ժողովների միջոցով համախմբվածություն առաջացավ

քրիստոնեական եկեղեցիների միջև:Ստեղծվեց ամբողջ եկեղեցական դավանաբանությունը արտածող աղոթքը՝ <<Հավատո Հանգանակը>>:

Եկեղեցին պայքարելով աղանդի ու աղանդավորների դեմ որոշ չափով իջեցրեց նրանց բեմահարթակից,որպեսզի հետագայում նրանք խնդիր չհանդիսանան քրիստոնեության հետագա զարգացման և տարածման համար:

Այս ամենից զատ՝ Տիեզերական ժողովներում քննարկվեցին նաև բազում աշխարհիկ և հոգեբանական հարցեր:Ստեղծվեցին պետության համար նախատեսված անխախտելի կանոնակարգեր:Ժողովուրդը սկսեց ապրել ավելի հանգիստ և պարկեշտ:Եվ իհարկե Տիեզերական Ժողովները հանդիսանում էին համայն Քրիստոնեական եկեղեցու ամուր հիմքն ու հենասյունը,որոնց շնորհիվ աստիճանաբար կառուցվեց ամբողջ քրիստոնեական դավանաբանությունը:Տիեզերական ժողովները հանդիսանում էին Քրիստոնեական եկեղեցու անվտանգության և պաշտպանության ամենահզոր պատնեշներից մեկը,որի միջոցով մենք այսօր հետևում ենք մեր ճշմարիտ և անխախտելի կրոնին:

Հետագայում Տիեզերական ժողովների արդյունքները նույնպես որոշ ժամանակ դարձան շատ քրիստոնեական եկեղեցիների տարաձայնությունների պատճառ:Որոշ եկեղեցիներ գժտվեցին,որոշները հաշտվեցին,որոշները մտերմացան,բայց անկախ ամեն ինչից Տիեզերական ժողովները հանդիսանում էին քրիստոնեական հավատքի ամուր հիմքն ու հիմնասյունը,որոնք պաշտպանում էին քրիստոնեական դավանաբանությունը տարբեր մարդկանց սուտ վկայություններից:

Քրիստոնյաների Տիեզերական ժողովների արդյունքները մեզ ինքնաբերաբար սովորեցնում են պաշտպանվել սուտ աղանդավորներից ու բութ հավատացյալներից,տարբերել ճիշտն ու սխալը,կեղծիքն ու ճշմարտությունը:

ԳԼՈՒԽ 2.ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

1.1.ՆԻԿԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ ԱՐԻՈՍԻ ԱՌԱՋԱԴՐԱԾ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Առաջին Տիեզերական ժողովը հրավիրվեց Նիկիայում՝ 325 թվականին:Նիկիան Փոքր Ասիայի Բութանիա քաղաքում գտնվող հելլենական քաղաք էր և Նիկիայի կայսրության մայրաքաղաքը:

Նիկիայի Տիեզերական ժողովը հրավիրվել է Կոստանդիանոս Մեծ կայսեր հրովարտակով:Ժողովին մասնակցել են 318 եպիսկոպոսներ (ըստ Եվսաթեոս Անտիոքացու՝ 250 և ավել) ընդ որում՝՝ Ալեքսանդր Ալեքսանդրացին,Աթանաս Ալեքսանդրացին,Գրիգոր Լուսավորչի որդի Արիստակեսը որպես Հայոց աշխարհի ներկայացուցիչ և այլն:

Նիկիայի Տիեզերական ժողովի հրավիրման պատճառը Ալեքսանդրիա քաղաքի Արիոս անունով մի երեցի տարածած ուսմունքի քննումն ու դատապարտումն էր:Արիոսը առաջ էր բերում ամբողջական միաստվածության (մոնոթեիզմի) գաղափարը,ըստ որի՝ կա մեկ ու միակ Աստված,իսկ մնացած ամեն ինչը,ներառյալ Աստծու Որդին և Սուրբ Հոգին ծնված են այլ էությունից,այլ ոչ Աստծո:Արիոսը պնդում էր,որ միայն Աստված է անսկիզբ,իսկ Որդին անսկիզբ չէ,այլ արարած է,ոչ համագոյակից:Արիոսն իր քաղվածքները քաղել էր հուդայականության և միջին պլատոնականության աղբյուրներից:

Արիոսը պնդում էր,որ եղել է ժամանակ,երբ Որդին չի եղել,եղել է միայն Հայր Աստված,այսինքն Հոր և Որդու միջև կա ժամանակային ջիղ,ինչից ստացվում է Նրանց հարաբերությունը:Նրա խոսքերով Քրիստոս ծնված է ոչնչից,այսինքն արարած է,բաժան է Աստծուց և եզակին ու միակը Հայր Աստվածն է:Ըստ նրա բաժան է նաև Սուրբ Հոգու էությունը և իբր Սուրբ Հոգին նույնպես Աստված չէ:Արիոսը սկսեց տարածել իր ուսմունքը և ձեռք բերել հետևորդներ:Եկեղեցին տեսնելով հավատքին սպառնացող այս մեծ վտանգը Բուլթանիայի Նիկիա քաղաքում կազմակերպում է ժողով,որին մասնակից էին գրեթե բոլոր Քրիստոնեական եկեղեցիները:Այդ ժողովում եկեղեցին մտադիր էր քննել ու դատապարտել Արիոսի առաջադրած հարցը: Արիոսը Եգիպտոսի Ալեքսանդրիայի

կողմերից էր: Իր գործունեության սկզբնական շրջանում նա հարում է Լիկապոլսի

եպիսկոպոս Մելիտոսին (վերջինիս հավատուրացության պատճառով Ալեքսանդրիայի Պետրոս եպիսկոպոսը չէր ընդունում նրան): Երբ Արիոսը հեռացավ Մելիտոս եպիսկոպոսից, սարկավագ ձեռնադրվեց Ալեքսանդրիայի

սուրբ Պետրոս եպիսկոպոսից:Երբ Սուրբ Պետրոս եպիսկոպոսը իմանում է Արիոսի և Մելիտոսի ամուր կապերի:մասին՝ հեռացնում է Արիոսին եկեղեցականի աստիճանից և մերժում է Արիոսի այն խնդրանքը,որ կրկին ընդունի իրեն եկեղեցի, սակայն երբ նա վախճանվում է, Արիոսը կրկին վերադառնում է Ալեքսանդրիա և

քահանա է ձեռնադրվում Ակյուղասից՝Պետրոս եպիսկոպոսի հաջորդից: Արիոսն

ակնկալություն ուներ դառնալու Ալեքսանդրիայի եպիսկոպոս, սակայն երբ Ակյուղասին այդ պաշտոնում հաջորդում է սուրբ Ալեքսանդր Ալեքսանդրացին, նա հասկանում է,որ կորած է:317 թվականից հետո Արիոսը սկսում է բացահայտորեն քարոզել իր վարդապետությունը: Սուրբ Ալեքսանդր Ալեքսանդրացի հայրապետը իր եպիսկոպոսների հետ ժողով է գումարում և դատապարտում է Արիոսի քարոզած վարդապետությունը: Եկեղեցին իր այս պառակտված վիճակից լուծում է գտնում շնորհիվ Կոստանդիանոս կայսեր, որը 325 թվականին ժողով է գումարել տալիս, որտեղ և նզովվում է արիոսականությունը: Արիոսն աքսորվում է Իլլիրիա: 328 թվականին Եվսեբիոս Կեսարացու բարեխոսությամբ Արիոսին և իր կողմնակիցներին կայսրը վերադարձնում է: 335 թվականին Տյուրոսում մի արիոսական ժողով է տեղի ունենում, որտեղ դատապարտվում է աթանասյան կուսակցությունը: Թեև Արիոսի դիրքն աճում էր Ալեքսանդրիայի եկեղեցում, և թվում է, թե մոտ էր նրա վերականգնումը, սակայն շուտով՝ ութսուն տարեկան հասակում, նա մահանում է:Այսքանն է հայտնի Արիոսի մութ կենսագրությունից:

Վերադառնալով մեր թեմային նշենք,որ Արիոսի ուսմունքը դատապարտվում և համարվում է հերետիկոսություն Նիկիայի Տիեզերական ժողովում,իսկ Արիոսին,ինչպես նշեցինք աքսորում են Իլլիրիա:

Անդրադառնանք Արոսի ուսմունքին:Վերլուծենք նրա խոսքը աստիճանակարգով:Արիոսն ասում էր << Քրիստոս անսկիզբ չէ, այլ ստեղծվել է ժամանակներից ու դարերից առաջ Հայր Աստծո ցանկությամբ, որպեսզի նրա միջոցով կատարվի արարչագործությունը:>>:Նրա դեմ դուրս եկավ Ալեքսանդրիայի Ալեքսանդր եպիսկոպոսը,ով իր քարոզներում անդադար նշում էր <<Հավիտենական է Աստված՝ Հավետենական է և Որդին>>:Իսկ ո՞րն էր պատճառը,որ Արիոսի դեմ առաջինը դուրս եկավ հենց Ալեքսանդր եպիսկոպոսը:Այժմ այս բոլոր հարցերի վերաբերյալներկայացնենք մեր վարկածը:

Կարծում եմ,նախ առաջին Արոսի նպատակը նոր ուսմունքի ուսուցումն ու

ուսումնասիրությունը չէր:Արիոսն ուղղակի ուզում էր մարդկանց ուշադրությունը հրավիրել իր կողմը:Իսկ,թե ինչու էր Արիոսն ուզում մարդկանց ուշադրությունն իր կողմ դարձնել՝ ահա:Արիոսը և Ալեքսանդր եպիսկոպոսը տարիներ առաջ՝ 313 թվականին պայքար էին ունեցել եպիսկոպոսի տիտղոսի համար:Արդյունքում

եպիսկոպոս էր դարձել Ալեքսանդրը,իսկ Արիոսին շատ քիչ թվով մարդիկ ընտրել:Արիոսը բոլորի դիմաց մեղադրեց Ալեքսանդրին հերետիկոսության մեջ

և քանի որ նա ճարտար լեզու ուներ,իր անիմաստ խոսքերով կարողացավ գրավել

70 կույսի,7 քահանայի և մի քանի եկեղեցականների:Սակայն Արիոսն ավելին էր ցանկանում:Նա ցանկանում էր,որ աշխարհը ճանաչի իրեն,այդ պատճառով նա սկսեց տարածել հակաաստվածաշնչյան ուսմունք,ըստ որի Որդին հավասար չէ Հայր Աստծուն և ցածր է նրանից:Նիկեայի Տիեզերական ժողովում ամբողջովին դատապարտվեցին Արիոսի հայացքները,ստեղծվեց Նիկիական հանգանակը,20 կանոնակարգ աշխարհիկ և հոգևոր հարցերի վերաբերյալ և կայացվեցին բազում այլ կարևոր որոշումներ:

Ահա մեր վարկածի հիմնավորումը:Մեր պնդումով Տիեզերական ժողովների պատճառ

հանդիսացող մարդիկ,ինչպիսին էր Արիոսը չէին ցանկանում ապացուցել իրենց

դիրքորոշումները,նրանք ուղղակի ցանկանում էին գտնվել

ուշադրության կենտրոնում,հանրության աչքի առաջ,մարդկանց դիմաց և այդ ծրագրի իրագործման համար ընտրել էին այդ անհասկանալի ճանապարհը:Այսպիսին էր ոչ միայն Արիոսը այլ նաև ուրիշները,(ինչպես Նեստորը),որոնց մասին կտեղեկանաք ավելի ուշ:

Խոսենք Արիոսի ուսմունքի հերքումից:Արիոսը պնդում էր,որ Քրիստոս հավասար չէ Աստծուն և ծնված է մեկ այլ՝ Հայր Աստծուց տարբեր էությունից:Այս մասին Հավատո Հանգանակում հատուկ շեշտադրություն դրվեց <<Որդին յԱստուծոյ,ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին,Այսինքն յէութենե Հոր…>> տողերի վրա:Հիշեցնենք,որ Քրիստոսի մասին գրվել էր,թե Նա մի անգամ Իր աշակերտներին հարցրեց.<<Իսկ ձեր կարծիքով ո՞վ եմ ես>>:Այս պահին ոտքի կանգնեց Սիմոն Պետրոսը և ասաց <<Դուք Քրիստոսն եք,կենդանի,Աստծո որդին>>[3]:

[3] Մատթեոսի Ավետարան-16:15-16

Մարկոսի ավետարանը (1:1) սկսվում է հետևյալ խոսքերով «Հիսու՛ս Քրիստոսի ավետարանի սկիզբը՝ Աստծո Որդին» և Հիսուսին տալիս է երկու հստակ բնորոշում՝ Քրիստոս և Աստծո Որդի[4]:

Ստացվում է,որ Արիոսը իր ուսմունքով մերժում է Սուրբ Գրքի ճշմարտությունն,ըստ որի կա երեք հավասար Աստվածություն՝ Հայր Աստված,Սուրբ Հոգի և Որդի Աստված,և Նրանք երեքն էլ միմյանց հավասար են:

Այսպիսով՝ Արիոսի ուսմունքը մերժվեց և դատապարտվեց Նիկեայի տիեզերական ժողովում անվանվելով հերետիկոսություն:Նրա դեմ դուրս եկավ հենց ինքը՝ Ալեքսանդր եպիսկոպոսը և Ալեքսանդրի հետ բյուրավոր այլ եկեղեցականներ:Արիոսին դատապարտեցին և նրան դեմ դուրս գալով հաստատեցին,որ Քրիստոս ԿԱՏԱՐՅԱԼ ԱՍՏՎԱԾ Է ԵՎ ԿԱՏԱՐՅԱԼ ԱՍՏՎԱԾ ԿԼԻՆԻ ՀԱՎԵՐԺ:

[4] Մարկոսի Ավետարան-1:11

2.2. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆ ՈՒ ՄԱԿԵԴՈՆԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Կոստանդնուպոլսի ժողովը գումարվեց 381 թվականին:Ժողովին ներկա էին 150 հայրապետներ:Ժողովը հրավիրեց Թեոդոսիոս Առաջին Մեծ կայսրը:Ժողովի հրավիրման հիմնական պատճառը Կոստանդնուպոլսի պատրարք Մակեդոնն էր:Մակեդոնը առաջադրում է մի ուսմունք,որը հետագայում առաջացնում է հոգեմարտեր կամ հոգեմարտներ անվանումը:Ըստ Մակեդոնի Սուրբ Հոգին Աստված չէր և չէր էլ կարող լինել,քանի որ նա առաջացել է ո՛չ Հոր էությունից և ո՛չ Որդու:Նա ծնվել է այլ,ինչ-որ արտասովոր էությունից և չի կարող Աստված լինել:Քննարկենք Մակեդոնի ուսմունքը:

Նախ և առաջ այն,որ Մակեդոնը առաջին հերթին աստիճանակարգում է Սուրբ Երրորդությունը՝ Հայր Աստծուն անվանելով Տեր,Որդի Աստծուն՝ սպասավոր,քանզի ծնվել էր Հոր բնությունից իսկ Սուրբ Հոգուն՝ ծառա և սպասավոր,քանզի չէր ծնվել ո՛չ Հորից և ո՛չ Որդուց:Մակեդոնի ուսմունքի մասին լավագույն վկայությունները տվել է վերջինս Գրիգոր Տաթևացին իր <<Ոսկեփորիկ>> աշխատությունումՏաթևացին նշում է,որ նրանք մերժում են Սուրբ Հոգու Աստվածությունը Սուրբ Գրքի վկայություններով,ասելով որ օրինակ Պողոսն իր նամակում գրել էր.<<Սուրբ Հոգին բարեխոս է լինում անմռունչ մեծությամբ>>,այսինքն Սուրբ Հոգին ծառա է և ոչ այլ ինչ:Տաթևացին այս առարկության մասին գրում է.<<Բարեխոսելը այսպես է մեկնաբանում Հովհան Ոսկեբերանը:Սուրբ Հոգին մկրտության ավազանում վերստին ծնվածներին ըստ շնորհաց չափի է արժանի դարձնում իմաստության և բացատրելու կարողության:Ինչ վերաբերում է նրան,թե ասում եք Սուրբ Հոգին շարժվում է,իսկ շարժվողն արարած է,գրենք,որ Սուրբ Գրքում նշվում է <<Եվ Դրախտում լսվեցին Աստծո ոտնաձայները>>,ուրեմն,թե Աստված շարժվում էր,արարա՞ծ էր նա>>[5]:

Ցանկանում եմ նշել,որ Պողոսը գրել է. <<Մենք իսկ թլփատում ենք,որ երկրպագում ենք Սուրբ Հոգուն>>[6]:

Մակեդոնի ուսմունքը առաջացել է արիոսականությունից:Մակեդոնը վերցրել է,որ եթե ըստ Արիոսի Որդին Աստված չէ,քանզի սառաջացել է ավելի ուշ և հավերժ չի

[5] Գրիգոր Տաթևացի,<<Ոսկեփորիկ>>,Գլուխ ԺԲ “Սուրբ Հոգու մասին ընդդեմ Մակեդոնի” 1995,<<Գթություն>> հրատարակչություն,էջ 53-54:

[6] Փիլիպի ավետարան-3:3

եղել,ապա ըստ Մակեդոնի Սուրբ Հոգին էլ առաջացել է մեկ այլ,տարբեր էությունից,քանզի ծնվել է ոչ Հորից,ոչ Որդուց:

Ստացվում է,որ Սուրբ Հոգին <<սպասավոր>> և <<ծառա>> չէ,այլ Կատարյալ Աստված է,քանզի Աստծու որդին է,բայց ոչ ծնված բնությունից,ինչպես Քրիստոս,այլ բխումով և նույն ինքն է Հոր Էությունից ծնված,ուրեմն Կատարյալ Աստված է:

Նշենք,որ քչերին է հայտնի,որ Ս.Աթանասը նամակով ջատագովում է Սուրբ Հոգու Աստվածությունը:Այդ նամակից հետո արդեն Մակեդոնը բոլորին հայտարարում է իր ուսմունքի մասին:

Նորից անդրադառնալով Մակեդոնի ուսմունքին:Քանի որ նրա ուսմունքը բխել էր Արիոսի ուսմունքից՝ Մակեդոնն ասում էր.քանի որ Սուրբ Հոգին բխում էր Որդուց,ապա Աստված չէր,քանի որ Որդին ըստ Արիոսի նույնպես Աստված չէր: Նախ փորձնականորեն արդեն ապացուցեցինք,որ Արիոսի ուսմունքը սխալորեն սխալ էր և Որդին կատարյալ Աստված էր և երկրորդ՝ Սուրբ Հոգին բխում էր և՛ Հայր Աստծուց և՛ Որդի Աստծուց:Այս ամենը առաջնորդվում է Սուրբ Երրորդությամբ:Երբ Մակեդոնը նշում է,թե Սուրբ Հոգին բխում է Որդուց,հարկ կլինի նշել,որ Աստվածաշնչում գրված է,որ Քրիստոսն ասել է.<<Երբ կգա մխիթարիչ Սուրբ Հոգին,որ առաքեց Հայրն իմ անունով>>:Այստեղից հետևություն,որ Սուրբ Հոգին առաքված էր Աստծու կողմից,Աստծու հոգին էր,Հայր Աստծուն հավասար Աստված և Սուրբ Երրորդության անբաժան մասը:

Կ. Պոլսի Տիեզերական ժողովը ընդունում է <<Մի Աստվածություն,երեք անձինք>> բանաձևը,որը հանդիսանում է Սուրբ Երրորդության գլխավոր արտադրիչը:

Այսպիսով՝ Կոստանդնուպոլսի Տիեզերական Ժողովը դատապարտում է Մակեդոնի հայացքներն ու աքսորում նրան եկեղեցուց:

2.3. ԵՓԵՍՈՍԻ ԺՈՂՈՎՆ ՈՒ ՆԵՍՏՈՐԻ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Երրորդ տիեզերական ժողովը հրավիրվեց Եփեսոսում՝ Հոգեգալստյան տոնին ընդառաջ:Հրավիրման պատճառը կրկին եկեղեցու համար վտանգ հանդիսացող ուսմունքի արտահայտիչն էր՝Նեստորը:Նեստորը արտահայտել էր այն ուսմունքը,որ Քրիստոս Մարիամից ծնվել է որպես մարդ,մահկանացու,հետո արդեն մկրտության ժամանակ մկրտվելով դարձել է Աստված:Նեստորի ուսմունքը համարվում էր Անտիոքի Աստվածաբանական դպրոցի ուսմունքը և այն զարգացրել էին չորրորդ դարի գրագիրներ Դիոդորոս Տարսեցին և Թեոդորոս Մոպսուեստացին իրենց աշխատանքներում:

Ինչպես նշեցինք ըստ Նեստորի Քրիստոս ծնվել է որպես մարդ,իսկ հետո արդեն մկրտվել և աստվածացել:Սակայն Նեստորի հայացքները կարելի է բացառապես հերքել Սուրբ Գրքի վկայություններով:Առաջին հերթին հրեշտակի հայտնվելը Մարիամին վկայում է նրա խոսքերի մասին.

- Մի վախենար, Մարիամ. Որովհետեւ Աստուածանից շնորհք գտար: Եւ ահա

  կ’յղանաս՝ եւ որդի կ’ծնես. Եւ նորա անունը Յիսուս կ’դնես:

Նա մեծ կ’լինի, եւ Բարձրեալի Որդի կ’կոչուի. Եւ Տէր Աստուածը նորա Դաւիթ հօր աթոռը կ’տայ նորան.

Եւ նայաւիտեան կ’թագաւորէ Յակոբի տան վերայ. Եւ նորա թագաւորութեանը վերջ չի լինիլ»[7]:

Եթե Քրիստոս Աստծու որդին էր բխված նրա էությունից,նրա բնությունից,նրա Հոգուց ապա ինչպես կարող էր սովորական մահկանացու լինել,ինչպես մենք բոլորս ենք:Նեստորը փաստացի կապեր է հաստատում իր և Արիոսի ուսմունքների միջև,քանզի Արիոսն ասում էր,թե Քրիստոսը հավերժ չէ և ունի ժամանակային սահման,իսկ Նեստորը նշում էր,որ միայն մկրտվելուց հետո է Քրիստոսն Աստված դարձել:Նեստոր դեմ դուրս եկավ Կյուրեղ Ալեքսանդրացին,ում կողմն էր անցել նաև տեղի գլխավոր եպիսկոպոս Մեմնոնը:Նեստորի համար ցավալի էր տեղի ընտրությունը,քանի որ իր կողմնակիցները ապահովության համար ընտրելու էին ցամաքային ճանապարհը:Այնինչ Կյուրեղն իր մարդկանցով նավով ժամանակից շուտ հասավ:

[7] Ղուկասի Ավետարան-1:30-33

Նեստորին կողմ էր ամբողջ կայսերական հովանավորությունը,նրան ուղեկցում էր Իրենէօս կոմսը,իսկ կոմս Կանդիդիան անձամբ էր հանձն առել ժողովի կազմակերպման հարցերը:Կյուրեղը չսպասելով Ասորիքի հյուրերի ժամանմանը սկսեց ժողովը,դատապարտեց Նեստորին և իր կողմնակիցներին հրավիրեց ստորագրելու:Մի քանի օր անց Ասորիքի եպիսկոպոսների հետ հայտնվում է նաև Հովհաննես եպիսկոպոսը:Նա հանդիսանալով վեճը դադարեցնող՝ մի նոր ժողով հրավիրեց և այդ ժողովին մասնակցեցին իր եպիսկոպոսներն ու կայսերական պաշտոնյաները:Վերջինս Մեմնոնին և Կյուրեղին անվանելով կռվարարներ,զրկեց նրանց եպիսկոպոսական աթոռից,մինչև իսկ անգամ առանց ատյան կանչելու:

Այս ամենից վրդովված,Կյուրեղի ժողովում երեք անգամ ատյան են կանչում Հովհաննես եպիսկոպոսին:Երբ վերջինս չի երևում,Կյուրեղը նրան որոշում է զրկել եկեղեցական հաղորդակցությունից:

Կյուրեղ եպիսկոպոսի մասին և Եփեսոսի ժողովի մասին առաջին հիշատակությունները արել է Ակակիոսի Բերոյայի 110 տարեկան եպիսկոպոսը:

Նեստորի ուսմունքի մասին կարելի է հիշատակել,որ առաջնորդվում էր <<Երկու բնություն,մեկ Քրիստոս>> առաջնորդությամբ:Սակայն Նեստորի հայացքների դեմ կարելի է ասել,որ Քրիստոսի ծննդյան մասին հիշատակված է՝<<Նրանից ծնվածը Սուրբ Հոգուց է>> [8] ,<<Քեզնից ծնվողը Սուրբ է>> [9] <<Անարատ մարմին պիտի ծնես>>[10]:Իսկ հասարակ մարդը չի կարող Սուրբ կոչվել:Եվ,որ ամենակարևորն է գրված է.<<Այսօր ձեզ Փրկիչ ծնվեց,որ օծյալ Տեր է>>[11] :Այս մասին Գրիգոր Տաթևացին գրել է.<<Պատասխան այն խոսքին,թե ասում է,որ լոկ Սուրբ մարդ է Քրիստոս:Արդ,ովչունի հավատքի լույսը՝ չի կարող տեսնել Քրիստոսին որպես Աստված,այնպես ինչպես հրեաները ասացին <<Դու մարդ ես և քո անձն Աստված ես համարում>> (Հովհ. 10.33)>>:[12]

Այս ամենից զատ,ով կարող է ասել,որ Քրիստոս կատարյալ չի ծնվել,մեծացել,նա կատարյալ Աստված չի եղել և չէ:Նա Կատարյալ Աստված է եղել, կա և կմնա հավերժ:

[8] Մատթեոսի Ավետարան-1:20
[9] Ղուկասի Ավետարան-1:35
[10] Երգ 8.4,Սուրբ Գրքի Հիշատակարան
[11] Ղուկաս2.11
[12] Գրիգոր Տաթևացի,<<Ոսկեփորիկ>>,1995,<<Գթություն>> հրատարակչություն,

ԳԼՈՒԽ 3.ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԸՆԴԴԵՄ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ

3.1.ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ <<ՄՈՆԻՖԻԶԻՏ>>,ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ ՉՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՉԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Հայոց եկեղեցին հավատարիմ մնաց միայն առաջին երեք Տիեզերական ժողովներին:Չորրորդ Տիեզերական ժողովը հրավիրվեց Քաղկեդոնում՝ 451 թվականին:Քաղկեդոնի ժողովի հրավիրման պատճառը Եվտիքես անունով մի մարդու ուսմունքն էր,որը արտածում էր Քրիստոսի մեկ բնության գաղափարը:Եվտիքեսը պնդում էր,որ Քրիստոսի մեջ կա միայն աստվածային էություն,իսկ մարդկային էության նշույլները լուծված են աստվածային բնության մեջ:Այս ուսմունքի շուրջ ծագում են վիճաբանություններ և հենց այդ վիճաբանություններն էլ առիթ են դառնում Քաղկեդոնի ժողովի հրավիրման համար:Քաղկեդոնի ժողովում մերժվում և նզովվում է Քաղկեդոնի ուսմունքը,քանի որ ակինհայտ էր,որ նրա դեմ առաջին հերթին դուրս էր եկել Հռոմի Պապ Լևոն Բ-ն,իսկ հռոմեական աթոռն առաջնայինն էր:Լևոն Բ-ն իր "Լևունի Տումար" փաստաթղթում ընդունում է "Մեկ Քրիստոս երկու բնութուն" բանաձևը:

Ինչ վերաբերում է Հայոց եկեղեցուն՝ նախ նշենք,որ Քաղկեդոնի ժողովում առանձնանում են քաղկեդոնականներ և ոչ քաղկեդոնականներ խմբավորումները:Հայ եկեղեցին չի ընդունում Քաղկեդոնի ժողովի որոշումները և այդ պատճառով ստանում է <<մոնիֆիզիտ>> անվանումը:

Իսկ ո՞րն էր ժողովի որոշումները չընդունելու պատճառը:Նախ նշենք,որ այս որոշումներով եկեղեցին ակնհայտ իջեցնում էր իրեն,քանի որ տարիներ առաջ տեղի ունեցած Եփեսոսի ժողովում ընդունվել է,որ Քրիստոս ծնվել է որպես Աստված,այլ ոչ թե որպես մարդ,մեծացել է որպես Աստված,այլ ոչ թե որպես մարդ,այսինքն Քրիստոս Կատարյալ Աստված էր և նրա մեջ մարդկային էությունը փոխզուգակցական էր:Սակայն հենց նույն եկեղեցին <<դեմ դուրս գալով իր որոշումներին>> ընդունում է Քրիսռոսի երկբնակության գաղափարը:Ինչու՞,քանի որ Հռոմի Պապը այդպես էր կարծում,իսկ Հռոմի եկեղեցին առաջնային էր:

Բայց արդյո՞ք ճիշտ էին ուսմունքների մասին շարունակվող այս անդադար վեճերը:Չէ որ Քրիստոս ինքը բարության,իրար հանդեպ բարությամբ լցվելու

խորհրդանիշ էր:Եկեղեցիները գժտվում էին,իրար չէին զիջում,կռվում ու խմբավորվում:Հասկանալի է,որ պատճառը կրոնն անարգելու վտանգն էր,սակայն մեր կրոնը ուսուցանում է ուղղակի հավատով լցվել Աստծու հանդեպ և նա կանի ամեն ինչ,իսկ Աստծուն պետք չէ անդադար ուսումնասիրել,մեկ է մարդկային ոչ մի արարած՝ առանց բացառության ոչ մեկը չի կարող ասել Աստծու մասին բացարձակ ճշմարտությունը:Այդ պատճառով մենք

ուղղակի պետք է հավատանք մեր Աստծուն և հավատարիմ մնանք նրան:

Կրկին վերադառնալով այս թեմային նշենք,որ ասվել է որ 5-րդ դարում ոչ թե խմբավորվել են եկեղեցիներ,այլ 5-րդ դարում ուղղակի փաստի վերածվեց դարեր ի վեր ծառացած անջրպետը[13]:

Շատ գրվածքներում նշված է նաև,որ եկեղեցիների գժտման պատճառը իրենց ավանդություններն էին:Հավելենք նաև,որ եկեղեցիների տարբեր կարծիքների հիմնավորման մեջ կարևոր է նշել,որ եկեղեցիները հաճախ շարժվում էին իրենց սեփական պստմությամբ ու ավանդույթներով,իսկ քանի որ եկեղեցիների ավանդույթները հաճախ տարբեր էին լինում,տարբեր էին լինում նաև նրանց կարծիքները:

Հայ եկեղեցական իրավունքի մեջ կարևոր էր և այն փաստը,որ Հայոց աշխարհում առաջինն էր քրիստոնեությունը ճանաչվել որպես պետական կրոն:Ճիշտ է Հայոց եկեղեցին չուներ արտոնություն այլ եկեղեցիների վրա,բայց Հայաստանում քրիստոնեությունն ուներ քաղաքացիական և առաջնային իրավունք:

Տիեզերական ժողովների հարցում Հայոց եկեղեցին ուներ ուրույն դիրքորոշում և կարծիք և այդ ամենի մասին վկայակոչվել էր դեռևս 5-րդ դարում Բաբկեն Ոթսմեցու և Մովսես Խորենացու աշխատություններում:

Այսպիսով՝ Հայոց եկեղեցին ընդունեց միայն առաջին երեք Տիեզերական ժողովները,որոնք հիմք հանդիսացան նրա դավանաբանության կառուցման,քրիստոնեության զարգացման և Աստծուն հավատարիմ մնալու հարցում:Իսկ ինչ վերաբերում է մյուս Տիեզերական ժողովներին՝ դրանց մասին կասենք,որ Հայոց եկեղեցին ուղղակի համամիտ չէր Տիեզերական ժողովների որոշումներին և դադարեց ընդունել դրանք:Սակայն դա երբեք ոչ մի էական դեր չի խաղացել Հայոց եկեղեցու զարգացման համար:

[13] Մելիք- Թանգեան Ն. <<Հայոց եկեղեցական իրավունքը>>,Շուշի,1903 թվական,էջ 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Քրիստոնեական տիեզերական ժողովների ընդհանուր բնութագիրն ու գաղտնիքները խորագրով հետազոտական աշխատանքը՝ եկանք հետևյալ եզրահանգման՝

1.Արիոսի նպատակը եղել է մարդկանց ուշադրության կենտրոնում լինելը,ինչը եղել է վրեժխնդրության դրդումից;

2.Մակեդոնի ուսմունքը բխել է առաջին հերթին Արիոսի ուսմունքից

3. Նեստորի ուսմունքը նույպես եկել է Արիոսականությունից,ինչը փաստում է,որ Նեստորն ու նրա հաջորդներն ուղղակի շարունակել են Արիոսի գործը,զարգացնելով աղանդն ու աղանդավորությունը:

4.Հայոց եկեղեցու՝ Տիեզերական ժողովներին չմասնակցելու և նրանց որոշումները չընդունելու հիմնական պատճառը ծառացած անջրպետն էր,ինչը առաջացել էր Տիեզերական ժողովների Հայ եկեղեցուն անկողմնակից լինելու պատճառով:

5.Եկեղեցիների գժտման հիմնական պատճառը պետությունների տարբեր ավանդույթներ և սովորություններ ունենալու փաստն էր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աջապահյան Մ. - <<Ընդհանուր Եկեղեցու Պատմություն>>,էջ 27- 28 (համացանցային կայքէջ,ամսաթիվ՝10.05.2022)

Բաբկեն Ա Ոթսմեցի,Ներսես Բագրևանդցի– Հին ձեռագրեր (համացանցային կայքէջ,ամսաթիվ՝ 09.05.2022)

Գրիգոր Տաթևացի - <<Ոսկեփորիկ>>,”Գթություն”հրատարակչություն,Երևան,1995,278 էջ

Գրիգոր Տաթևացի - <<Գիրք Հարցմանց>>,”Տիգրան Մեծ” հրատարակչություն,թիվը՝անհայտ:

Մովսես Խորենացի - <<Հայոց Պատմություն>> (համացանցային կայքէջ՝ Վիքիպեդիա ազատ հանրագիտարան)

Չամչյան Մ. - <<Հայոց Պատմություն>>,ԵՊՀ հրատարակչություն,Երևան,1985,407-419 էջ

Պոսնով Մ.Ե.–“Քրիստոնեական եկեղեցու պատմություն,Սոֆիա,1937,էջ 330-332